ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 562.1-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԱՅԼԵՌ ԱՏԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» սեպտեմբեր 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի, ով գործում է լիազոր մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ՄԱՅԼԵՌ ԱՏԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կազմակերպիչ), ի դեմս տնօրեն Միհեր Բաղդասարյանի, ով գործում է կազմակերպչի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (Լիազոր մարմինը և Կազմակերպչին միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5--րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1302-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 6-րդ կետը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրի առարկա է հանդիսանում Որոշման 1-ին կետով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրում (այսուհետ՝ ԱՏԳ տեղակայման հողատարածք)՝ ըստ Որոշմամբ նշված սահմանագծի ստեղծված զբոսաշրջային-

ռեկրեացիոն ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ)՝ կազմակերպման, ԱՏԳ ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման, Կազմակերպչի կողմից ծառայությունների մատուցման, ներդրումների իրականացման, ԱՏԳ շահագործողների ներգրավման, Լիազոր մարմնի կողմից մշտադիտարկման իրականացման արդյունքում առաջացող և ԱՏԳ գործունեության հետ կապված այլ իրավահարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

1.2. Պայմանագրում կիրառվող հասկացություններից են՝

1.2.1. **անվտանգության համակարգ՝** անվտանգության համակարգը ներառում է՝ պահնորդական ծառայություններ, Որոշմամբ հաստատված ԱՏԳ տարածքում տեսահսկող համակարգերի առկայություն՝ համաձայն Կազմակերպչի համապատասխան նախագծերի,

1.2.2. **առաջնային բուժօգնություն՝** առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար համապատասխան բուժական կետի առկայություն կամ այն ցուցաբերելու համար բուժօգնության ներգրավման կապի հասանելիություն,

1.2.3. **հակահրդեհային համակարգ՝** հրդեհային տեխնիկա և սարքավորում, հրդեհային հանդերձանք, կրակմարիչ, հրապահպան և հրակայուն նյութեր, հատուկ կապի և կառավարման միջոցներ, համակարգչային ծրագրեր, ինչպես նաև հրդեհների կանխարգելման և հրդեհաշիջման այլ միջոցների առկայություն.

1.2.4. **շահագործման կանոններ՝** Կազմակերպչի կողմից սահմանված կանոններ ԱՏԳ-ում գործունեության ընդհանուր կարգուկանոնի վերաբերյալ.

1.2.5. **միասնական ընդունարան՝** ազատ տնտեսական գոտում «Մեկ պատուհան» սկզբունքն իրականացնող պետական ծառայությունների մատուցման միասնական ընդունարան:

2. ԱՏԳ գործարկման պայմանները

2.1. ԱՏԳ գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համարվում է գործարկված Ազատ տնտեսական գոտիների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից տրված եզրակացության հիման վրա՝ Կազմակերպչի կողմից հետևյալ պահանջների կատարումից հետո.

2.1.1. տարածքի անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով ապահովվածությունը.

2.1.2. անխափան ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման, աղբահանության և կապի միջոցների (առնվազն հեռախոսային կապի և ինտերնետի) ապահովվածությունը.

2.1.3. ջրամբարի թասի (ջրի հայելու), որպես ջրային ֆոնդի տարածքի անձեռնմխելիությանը՝ ափեզրի ամբողջ երկայնքով՝ սահմանափակված 1837.5 մ (Բ. Ծ. Մ.) նիշով և դրան զուգահեռ 100 մ լայնությամբ ձգվող հողաշերտով պահպանումը.

2.1.4. ԱՏԳ-ի տարածքից ջրամբարի անօտարելի գոտու և ջրամբարի թասի տարածքի, ջրային ռեսուրսների աղբոտման ու աղտոտման բացառումը.

2.1.5. Ապարանի ջրամբարի կատարից սկսվող և ջրամբարի թասի ձախ ափով ձգվող (մինչև թասի վերջնամասը) գրունտային ավտոճանապարհի՝ որպես ԱՏԳ տարածք տանող ճանապարհ չդիտարկվելը և չներառվելը ծրագրում կամ դրա օժանդակման - աջակցման բաղադրիչում, քանի որ պատվարը հողալիցքային է՝ ավազակավային միջուկով և նախատեսված չէ նման տրանսպորտային հոսքերի անցկացման համար:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Լիազոր մարմինն իրավունք ունի՝

3.1.1. Իրականացնել ազատ տնտեսական գոտում Կազմակերպչի գործունեության վերլուծություն՝ չխոչընդոտելով նրա գործունեությունը.

3.1.2. իրականացնել վերլուծություն Կազմակերպչի՝ Կառավարության որոշմամբ հավանության արժանացած ներդրումային ծրագրի, ինչպես նաև ազատ տնտեսական գոտու կազմակերպման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ.

3.1.3. հետևել ազատ տնտեսական գոտու գործունեության վերաբերյալ կազմակերպչի հաշվետվությունները ներկայացնելուն.

3.1.4. վերլուծության իրականացման շրջանակում ստանալ Կազմակերպչից անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ԱՏԳ օրենսդրության պահանջների, Որոշմամբ հաստատված գործարար ծրագրի (այսուհետ նաև՝ Գործարար ծրագիր) և Պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ՝ գրավոր հարցման հիման վրա.

3.1.5. Կազմակերպչի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ գրավոր ծանուցել Կազմակերպչին՝ սահմանելով Կազմակերպչի կողմից բացատրություններ տալու և թերությունները վերացնելու

Կողմերի միջև համաձայնեցրած ժամկետներ, որը չի կարող լինել պակաս, քան երկամսյա ժամկետը.

3.1.6. յուրաքանչյուր օրացուցային տարին լրանալուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում հաշվետվություն չներկայացնելու դեպքում գրավոր կերպով ծանուցել կազմակերպչին՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, իսկ տվյալ պարտականության և/կամ սույն Պայմանագրի 4.1 կետի չկատարման դեպքում Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու հարցը:

3.2. Լիազոր մարմինը իր իրավասությունների շրջանակներում պարտավոր է՝

3.2.1. աջակցել ԱՏԳ առաջմղման գործում.

3.2.2. պետական պաշտոնական կապերի (տեղեկատվական, դիվանագիտական և այլն) օգտագործմամբ գործընկեր պետությունների համապատասխան կառույցներին տեղեկացնել ԱՏԳ վերաբերյալ (մասնագիտացման ոլորտը, առավելությունները, պայմանները և այլն).

3.2.3. օժանդակել օտարերկրյա պետություններում համապատասխան կազմակերպությունների հետ աշխատանքների կազմակերպման հարցերում.

3.2.4. լիազոր մարմնի պաշտոնատար անձանց մասնակցությամբ տեղական և արտասահմանյան գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ հանդիպումների, պաշտոնական այցերի ընթացքում տեղեկացնել ԱՏԳ վերաբերյալ:

3.3. Կազմակերպիչն իրավունք ունի՝

3.3.1. վարձակալության հանձնել կամ վաճառել շահագործման ենթակա ազատ տնտեսական գոտու տարածքը և ենթակառուցվածքը: Կազմակերպիչը այդ տարածքները վարձակալությամբ տրամադրում կամ վաճառում է իր ցանկությամբ՝ ելնելով ԱՏԳ զարգացման քաղաքականությունից և գործարար ծրագրի առանձնահատկություններից.

3.3.2. շահագործողի հետ կնքված պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվել ՀՀ օրենսդրությամբ և շահագործողի հետ կնքված պայմանագրով սահմանված դեպքերում և ժամկետներում:

3.4. Կազմակերպիչը պարտավոր է՝

3.4.1. ապահովել համապատասխան ներդրումներ՝ ըստ Որոշման N 4 հավելվածով հաստատված գործարար ծրագրի: Գործարար ծրագրի ներդրումների ծավալները դրամական արտահայտությամբ կրում են կանխատեսումային բնույթ և կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով ընթացիկ շուկայական և մակրոտնտեսական իրավիճակը, իսկ փաստացի կատարված ներդրումները պետք է լինեն փաստաթղթերով հիմնավորված: Փաստացի ներդրումների շեղումը պլանավորված ներդրումներից տարեկան կտրվածքով չի կարող գերազանցել 20%, բացառությամբ տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմինների գործողություններով կամ անգործությամբ պայմանավորված շեղումների.

3.4.2. Լիազոր մարմնին ներկայացնել հաշվետվություններ ԱՏԳ-ի գործունեության վերաբերյալ՝ Կառավարության սահմանած կարգով, ձևով և ժամկետներում.

3.4.3. վերացնել Լիազոր մարմնի կողմից իր գործունեության վերլուծության իրականացման ընթացքում բացահայտված թերությունները՝ Լիազոր մարմնի հետ համաձայնեցված ժամկետներում.

3.4.4. տրամադրել տեղեկանք պոտենցիալ շահագործողին ԱՏԳ-ում գործունեության պայմանների, մատուցվող ծառայությունների, դրանց սակագների վերաբերյալ, ինչպես նաև ԱՏԳ-ի գործունեությանն առնչվող այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Տեղեկանքը պետք է տրամադրվի շահագործողին դիմելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.

3.4.5. ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 727-Ն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքել պայմանագիր ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու հավանություն ստացած հայտատուների հետ.

3.4.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատել, օգտագործել ազատ տնտեսական գոտու ինժեներական կառույցները և ենթակառուցվածքները.

3.4.7. ստեղծված ԱՏԳ-ի տարածքում մատուցել Գործարար ծրագրով նախատեսված ծառայությունները.

3.4.8. տրամադրել անվճար տարածք միասնական ընդունարանի կազմակերպման համար և ապահովել անհրաժեշտ պայմաններ միասնական ընդունարանի անխափան գործունեությունը ծավալելու համար: Միասնական ընդունարանի տարածքը տրվում է ԱՏԳ-ում համապատասխան աշխատակիցների առկայության դեպքում.

3.4.9. որոշմամբ հաստատված այն հողատարածքները, որոնք, համաձայն գործող օրենսդրության, ենթակա չեն օտարման (սեփականության իրավունքով փոխանցման, վարձակալության, ենթավարձակալության), կարող են օտարվել «ՄԱՅԼԵՌ ԱՏԳ» ՍՊ ընկերությանը՝ միայն օրենսդրությամբ վերջիններիս նկատմամբ նման հնարավորություն առաջանալու դեպքում.

3.4.10. ԱՏԳ տարածքի սահմանագծում ներառված անտառային հողերի տարածքում գործունեություն իրականացնել՝ համաձայն ՀՀ Անտառային օրենսգրքի.

3.4.11. իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ազատ տնտեսական գոտու միջազգային ճանաչմանը և դրանում շահագործողների ներգրավմանը.

3.4.12. իրականացնել մարքեթինգային ծրագիր.

3.4.13. ստեղծել ԱՏԳ վերաբերյալ մասնագիտացված մշտապես թարմացվող կայք,

3.4.14. ԱՏԳ-ի շահագործման կանոնների սահմանում և հրապարակում.

3.4.15. իրականացնել ԱՏԳ տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ համաձայն ԱՏԳ տարածքի զարգացման նախագծի և հատակագծերի.

3.4.16. շահագործման կանոններում ներառել դրույթ՝ ուղղված բնապահպանությանը վերաբերող օրենսդրության պահպանմանը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով և Գործարար ծրագրով նախատեսված պարտավորությունների՝ սահմանված ժամկետներում չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպիչը Լիազոր մարմնի հետ համաձայնեցված ժամկետներում, բայց ոչ ավելի, քան 1 տարին, կատարում է չկատարված պարտավորությունները և շտկում թերությունները:

4.2. Գործարար ծրագրի և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում է համարվում ստանձնած պարտավորությունների թվային ցուցանիշներից առնվազն 20 տոկոս բացասական շեղումը:

4.3. Լիազոր մարմնի կողմից ԱՏԳ մեկնարկի մասին որոշման կայացումը ուշացնելու կամ Կազմակերպչի կողմից Որոշմամբ և Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները կատարելուց, այդ թվում՝ ԱՏԳ գործարկման բոլոր պայմաններն ապահովելուց հետո, մեկնարկի որոշում չկայացվելու դեպքում՝ Կազմակերպիչը չի կրում պատասխանատվություն մեկնարկի կապակցությամբ Որոշմամբ և Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք անհնարին են դարձնում ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի ազդեցությունը դադարելուց հետո Կողմերը պետք է անհապաղ ձեռնամուխ լինեն ԱՏԳ օրենսդրությամբ սահմանված, Գործարար ծրագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, որոնք դադարեցվել էին այդպիսի ազդեցության հետևանքով:

6.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես 3 /երեք/ օր առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 20 տարով և ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից:

7.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.3. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել մյուս կողմին իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, որոնք կարող են անբարենպաստ անդրադառնալ Կողմերի պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

7.4. Պայմանագրի դրույթները խախտելը կամ չկատարելը հիմք է հանդիսանում պայմանագիրը լուծելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

7.5. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Որոշմամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 8 էջից, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի 1 (մեկ) օրինակը մնում է Լիազոր մարմնի մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Կազմակերպչին:

8. Կողմերի գտնվելու վայրը, վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ՄԱՅԼԵՌ ԱՏԳ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, 0005, քաղաք Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցեն՝ ՀՀ, 0014, քաղաք Երևան, Ադոնցի 8 Գրանցման հասցե՝ 264.110.1340301 ՀՎՀՀ՝ 08263796
գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյան _____	տնօրեն Միհեր Բաղդասարյան _____

/ Ա. Շահբազյան / Գ. Հարությունյան